ԼԵՌԸ ՇԱՐԺԵԼ

ԲԱՆԱԼԻ ԽՈՍՔ. ԵԼԻՑ 33:18-23, ՄԱՏԹԵՈՍ 17:1-8

I. ԼԵՌ, ՈՐՏԵՂ ՄԵՆՔ ԳԱԼԻՍ ԵՆՔ ԱՍՏԾՈՒՆ ՀԱՆԴԻՊԵԼՈՒ:

*Մատթեոս 17:1-3 – **1** Վեց օր հետո Հիսուսը Պետրոսին, Հակոբոսին ու նրա եղբայր Հովհաննեսին իր հետ վերցրեց և նրանց առանձին մի բարձր լեռ հանեց: **2** Եվ նրանց առաջ այլակերպվեց. (metamorphoō) նրա դեմքն արեգակի պես փայլեց, իսկ զգեստները լույսի պես սպիտակ դարձան: **3** Եվ ահա նրանց երևացին Մովսեսն ու Եղիան, որոնք խոսում էին Հիսուսի հետ:*

*Ելից 33:18-23 – **18** Մովսեսն ասաց. Աղաչում եմ, ցո՛ւյց տուր ինձ քո փառքը: **19** Տերն ասաց. Ես իմ ամբողջ բարությունը կանցկացնեմ քո առջևից և Տիրոջ անունը կկանչեմ քո առաջ. ում ողորմելու եմ, կողորմեմ, և ում գթալու եմ, կգթամ: **20** Եվ ասաց. Դու իմ երեսը չես կարող տեսնել, որովհետև մարդ չի կարող ինձ տեսնել ու կենդանի մնալ: **21** Տերն ասաց. Ահա ինձ մոտ մի տեղ կա. կանգնի՛ր այդ ժայռի վրա: **22** Երբ ես անցնեմ իմ փառքով, քեզ կդնեմ ժայռի խոռոչի մեջ և իմ ձեռքով քեզ կծածկեմ, մինչև որ ես անցնեմ: **23** Հետո իմ ձեռքը կվերցնեմ քո վրայից, և դու կտեսնես ինձ հետևից, բայց իմ երեսը չի երևա:*

*Մատթեոս 17:4-8 – **4** Պետրոսը Հիսուսին ասաց. Տե՛ր, լավ է, որ մենք այստեղ մնանք: Եթե կամենաս, այստեղ երեք տաղավարներ կպատրաստենք. մեկը՝ քեզ համար, մեկը՝ Մովսեսի, մեկն էլ՝ Եղիայի: **5** Մինչ նա խոսում էր, մի լուսավոր ամպ հովանի եղավ նրանց վրա: **Ամպից** մի **ձայն** լսվեց, որ ասում էր. Դա՛ է իմ սիրելի **Որդին**, որն ունի իմ բարեհաճությունը. դրա՛ն լսեք: **6** Երբ աշակերտները լսեցին, երեսնիվայր ընկան ու շատ վախեցան: **7** Հիսուսը մոտեցավ, դիպավ նրանց ու ասաց. Վե՛ր կացեք ու մի՛ վախեց: **8** Նրանք աչքերը բարձրացրին և Հիսուսից բացի ոչ ոքի չտեսան:*

Աստծո ներկայությունը քո մեջ է:

*Ա Կոր. 6:19-20 – **19** Կամ չգիտե՞ք, որ ձեր մարմինները տաճար են Սուրբ Հոգու, որ ձեր մեջ է, և որն Աստծուց ունեք, և դուք ձերը չեք: **20** Քանզի մեծ գնով եք գնվել, ուստի փառավորե՛ք Աստծուն ձեր մարմնի մեջ:*

Սուրբ Հոգին մեզ փառքից փառք է փոխակերպում:

Բ Կորնթացիս 3:18 – Սակայն մենք բոլորս, բաց երեսով Տիրոջ փառքը ինչպես հայելու մեջ տեսնելով, նույն պատկերով կերպարանափոխվում ենք (metamorphoō) փառքի մի աստիճանից դեպի մյուսը՝ առաջնորդվելով Տիրոջ կողմից, որ է Հոգին:

II. ՄԵՆՔ ՊԵՏՔ Է ԲԱՐՁՐԱՑՆԵՆՔ ՄԵՐ ԿԱՐԻՔՆԵՐԸ ԴԵՊԻ ԱՍՏԾՈ ՓԱՌՔԻ ԼԵՌԸ:

Մատթեոս 17:9 Լեռան վրայից իջնելիս...

*Մատթեոս 17:14-21 – **14** Երբ նրանք ժողովրդի մոտ եկան, Հիսուսին մի մարդ մոտեցավ, ծնկի իջավ և ասաց. **15** Տեր, ողորմի՛ր իմ որդուն, որովհետև լուսնոտ է և սաստիկ տանջվում է. հաճախ ընկնում է կրակի կամ ջրի մեջ: **16** Ես նրան քո աշակերտների մոտ բերեցի, բայց նրան չկարողացան բժշկել:*

> *Մարկոս 9:24 – Այդժամ տղայի հայրն աղաղակեց ու արտասուքով ասաց. Հավատում եմ, Տեր, օգնի՛ր իմ անհավատությանը:*

***20** Ձեր թերահավատության պատճառով: Ճշմարիտ եմ ասում ձեզ. եթե **մանանեխի հատիկի չափ** հավատ ունենաք և **այս սարին ասեք**՝ "ԱՅՍՏԵՂԻՑ ԱՅՆՏԵ՛Ղ փոխադրվիր", այն կփոխադրվի: Եվ ձեզ համար անկարելի ոչինչ չի լինի: **21** Բայց այս դիվային սերունդն այլ կերպ դուրս չի գալիս, եթե ոչ աղոթքով ու ծոմով:*

ՄԱՆԱՆԵԽԻ ՀԱՏԻԿԻ ՉԱՓ ՀԱՎԱՏ.

Իսկ դու բարձրացրո՛ւ գավազանդ, մեկնի՛ր ձեռքդ ծովի վրա, ձեղքի՛ր այն, և Իսրայելի որդիները ծովի միջով գնան ցամաքով (Ելից 14:16):

Հեսույի աղոթքով արեգակը կանգնեց երկնքի մեջտեղում և չշտապեց մայր մտնել ամբողջ մեկ օրվա չափ: (Հեսու 10:13):

Եսայիա մարգարեն Տիրոջը կանչեց, և ստվերը տասը աստիճան ետ դարձրեց այն աստիճաններից, որ իջել էր Աքազի աստիճաններով (Դ Թագ. 20:11):

Գեդեոնը միայն 300 հոգով ջախջախեց մադիանացիների 135,000 բանակին (Դատ. 6-7)

> *Եբրայեցիներին 11:13 –**Սրանք բոլորը հավատի մեջ մեռան**՝ առանց խոստումներն ստանալու: Բայց հեռվից տեսնում էին դրանք...*

Աղոթք

Հայ՛ր, շատ հաճախ ես ինձ զգում եմ ինչպես այս տղայի հայրը, ով առաջին անգամ աղաղակեց. «Ես հավատում եմ բայց օգնիր ինձ հաղթահարել իմ անհավատությանը» (Մարկոս 9:24): Խնդրում եմ, օգնիր ինձ հաղթահարել իմ սեփական անհավատությունը:

Հայր, ըստ Քո Խոսքի, առանց հավատքի անհնար է Աստծուն հաճելի լինել, որովհետև քեզ մոտեցողը պետք է հավատա, որ դու կաս, և վարձատրում ես նրանց ովքեր սրտանց փնտրում են Քեզ: (Եբր. 11:6) Տե՛ր, ես ուզում եմ հաճելի լինել քեզ:

ԻՆՉ Է ՍՈՒՐԲ ՀՈԳԻՆ ԱՍՈՒՄ ԻՆՁ ԱՅՍ ՊԱՏԳԱՄԻ ՄԻՋՈՑՈՎ: